ԲԱՋՈՒՄ ԱՂՄՈՒԿ ՎԱՍՆ...

ՌԵՊՈՐՏԱԺ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՑ

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀԲԱՋԵԱՆ

Ապրիլի 25ին Գերագոյն Խորհրդի որոշմամբ հրաւիրուեց արտահերթ նստաշրջան: Նստաշրջանի հրաւիրումը պայմանաւորուած էր Արցախում, Շահումեանում եւ Գետաշէնում իրավիճակի կտրուկ սրմամբ: Նստաշրջանին ներկայ էին նաեւ Հայաստանից ընտրուած ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւորներ, Հ.Հ. Պետական Անվտանգութեան Կոմիտէի նախագահ Յուսիկ Յարութիւնեանը, Հ.Հ. Նախարարների Խորհրդի նախագահի ազգային անվտանգութեան խնդիրների ծրագրման եւ համակարգումի հարցերով գլխաւոր խորհրդական՝ Աշոտ Մանուչարեանը, լրագրողներ: Նախագահութեան առաջարկով նպատակայարմար գտնուեց նիստը անցկացնել փակ՝ առանց եթեր արձակման:

Նախ Արցախի եւ Միութեան ընդհանուր քաղաքական իրավիճակի վերլուծութեամբ հանդէս եկաւ ԳԽ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը:

Նա նշեց, որ Խորհրդային Միութիւնում տեղի են ունենում բարդ գործընթացներ, կենտրոնում կատարւում է ուժերի վերաբաշխում: «Միութիւն» պատգամաւորական խումբը պահանջում է հրաւիրել ԽՍՀՄ համագումար քննելու համար Գորբաչովի հարցը: Մոսկուայում գումարուել է ԽՍՀՄ հանրաքուէ անցկացրած 9 հանրապետութիւնների ներկայացուցիչների հաւաք, ուր խօսուել է միութենական պայմանագիրը ստորագրելու մասին: Մինչ Կրեմլում զբաղուած են «արքունական ինտրիգներով», ընդհանուր այս կացութեան մէջ Ադրբեջանը խաղում է իր խաղը: Օգտուելով այն հանգամանքից, որ Մոսկուայում ոչ ոք այս պահին լուրջ քաղաքականութեամբ չի զբաղւում, վերջինս կարողանում է կաշառել որոշ միութենական գերատեսչութիւնների՝ Արցախում իր քաղաքականութիւնը իրականացնելու համար: Մասնաւորապէս Ապրիլի 16ին Ադրբեջանի նախագահ Մութալիբովի մօտ տեղի է ունեցել իրաւապահ մարմինների ներկայացուցիչների խորհրդակցութիւն: Պահանջուել է Շահումեանից, Գետաշէնից դուրս բերել ներքին զօրքերը եւ դրանք փոխարինել Ադրբեջանի յատուկ ջոկատներով: Շահումեանի, Գետաշէնի եւ Մարտունաշէնի բնակչութիւնից պահանջւում է ենթարկուել Ադրբեջանի սահմանադրութեանը, չենթարկուելու դէպքում սպառնում են բռնագաղթով: Խորհրդակցութիւնից յետոյ հեռագրեր են ուղարկուել Եազովին, Կրիւչկովին, Պուգոյին:

Դեռեւս Ապրիլի 3ից Գետաշէնի վրայ յարձակումներ էին տեղի ունենում, ինչը որ վկայում է Մութալիբովի ծրագրի գործադրման մասին: Ներքին զօրքերի հրամանատար Շատալինի հրամանով Գետաշէնից եւ Մարտունաշէնից դուրս են բերուել Արցախի յատուկ շրջանի պարէտ Ժուկովի ստորաբաժանումները, ինչը որ պահանջում էր Մութալիբովը: Նոյն ժամանակ փորձ է արուել զիւղերը մտցնել Գանձակից բերուած մի վաշտ, սակայն 3 օր տեւած կռուից յետոյ նրանց չի յաջողուել գիւղ մտնել: Ադրբեջանցիները ամեն բան անում են ցոյց տալու համար, որ իբր մեղաւոր են հայ գրոհայինները եւ նոյնիսկ տարածուել է այնպիսի մի վարկած, ըստ որի Գետաշէնում եւ Մարտունաշէնում ընդհանրապէս խաղաղ բնակչութիւն չկայ: Լեւոն Տէր Պետրոսեանը տեղեկացրեց, որ այդ օրերին արուել է հնարաւոր ամեն բան կանխելու համար վտանգաւոր զարգացումները:

ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւոր Զօրի Բալայեանը ծանօթացրեց վերջին օրերին տարուած աշխատանքներին, որոնք փաստօրէն կոչուած էին ապահովելու Գետաշէնի, Մարտունաշէնի գոյութիւնը:

Պատգամաւոր Իգոր Մուրադեանի հարցին, թէ ճի՞շտ է, որ Մոսկուան նախապատրաստում է հայերի բռնագաղթ, ՊԱԿի նախագահ Յուսիկ Յարութիւնեանը պատասխանեց, թէ նման տեղեկութիւններ Կոմիտէն չունի:

Լեւոն Տէր Պետրոսեանը պատգամաւորների ուշադրութեանը յանձնեց նախօրօք կազմած երկու նախագծեր, որոնցից առաջինը առաջարկում էր ստեղծել յանձնաժողով Արցախում, Շահումեանի շրջանում, Գետաշէնի ենթաշրջանում, ինչպէս եւ Հայաստանի ներսում Միութենական մի շարք բարձրագոյն պաշտօնեաների կողմից իրականացուած հակաիրաւական, հակահայ գործողութիւնների հրահրման փաստերը ուսումնասիրելու համար, իսկ երկրորդով՝ հարց յարուցել ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւորներին արտահերթ նիստ գումարելու վերաբերեալ:

Գերագոյն Խորհրդի Հ.Յ.Դաշնակցութեան ֆրակցիայի ներկայացուցիչ ընկ. Մեխակ Գաբրիէլեանը իր դժգոհութիւնը յայտնեց, այն առումով, որ չի կարելի արտահերթ նիստ գումարել եւ ժամ առ ժամ օրհասական դարձող կացութիւնը չքննելով ամբողջութեամբ, պարտադրել քուէարկելու նախագահութեան կողմից իջեցուած նախագծերը:

Քուէարկութեամբ ստեղծուեց 10 հոգիանոց յանձնաժողով, որի նախագահ հաստատուեց Սուրէն Զօլեանը: Մի քանի պատգամաւորներ կասկածի ենթարկեցին յանձնաժողովի ստեղծման անհրաժեշտութիւնն ու օգտաւէտութիւնը:

Ընդունուեց նաեւ արտահերթ համագումար հրաւիրելու վերաբերեալ նախագահութեան ներկայացրած նախագիծը: Պատգամաւոր Խաչիկ Սաֆարեանը խօսք առնելով, ասաց, թէ չի կարելի Գերագոյն Խորհրդի վզին նման անիմաստ քննարկումներ փաթաթել, որովհետեւ նման հարցերը պէտք է լուծի Հայաստանի կառավարութիւնը: Նա աւելացրեց, որ ընդունուած փաստաթղթերը գրեթէ ոչինչ չեն փոխում ստեղծուած կացութեան մէջ: Իրականում ստեղծուել էր մի հակասական վիճակ, երբ աւելի լուրջ ու գործնական օգնութեան կազմակերպման մասին չէր կարելի խորհրդարանի նիստում խօսել, իսկ պատրաստի նախագծերի քննարկումը ոչ առաջնահերթութեան եւ ոչ էլ արտակարգ նիստեր գումարելու անհրաժեշտութիւն ունէր: Նաեւ ցաւալի է, որ յատկապէս Արցախի հարցում դրսեւորուող այս կամ այն կազմակերպութեան, անհատների՝ մշտական շահագրգռութիւնը եւ պահանջկոտութիւնը որակւում է որպէս հարցի շահարկում: Այնինչ տրամաբանական կը լինէր ազգային-ազատագրական պայքարի մարզում գործել միասնաբար, չընդունելով մենաշնորհեալի կեցուածք, ազգային շահերը գերադասել նեղ-խմբակային շահերից: